

Դ. — 1587? — 9. — Յովհաննէս Բրոնցի.
— Բանասէր, էջ 293:

Ե. — 9 — 1623. — Կարապետ Վրդ. Փար-
խընկեցի, աշակերտ Ապարանցի Սիմէոն
վարդապետի: Վանքին նուիրած է մէկ լաւ
Աստուածաշունչ. — Բանասէր, էջ 293-4:

Իր աշակերտներէն Ներսէս Վրդ. Մոխ-
րաբերդցի, վարդապետական իշխանութիւն
առնելէ ետք, քարոզչութեամբ կ'երթայ
մինչև Կաֆայ, և հոն կը վախճանի: Բայց
իր աշակերտին՝ Ղուկիկի Հայրապետ Վար-
դապետի ձեռքով նուէր կը զրկէ պատուա-
կոտ գոհարազարդ սկիչ մը. — Նոյն:

Փարխընկեցիի միւս աշակերտներն են
Պետրոս Վրդ. Գաւաշցի և Բարսիլ Վրդ.
Աթախցի:

Կարապետ Վրդ. Թաղուած է Խնդրա-
պատր Վանքի գերեզմանատունը. — Յ.
Թօփնեան, Յուցակ, էջ 99: — Իր զբու-
թիւններէն ծանօթ է «Կարգ Վարդապե-
տաց». — Հանդ. Ամս., 1951, էջ 177-8:

Զ. — 1624? — 9. — Պետրոս Վրդ. Գա-
ւաշցի, աշակերտ Փարխընկեցի Կարապետ
վարդապետի. — Բանասէր, էջ 293:

Է. — 1630? — 9. — Յակոբ Վրդ. Բաղի-
եցի, Դականուն Միքուէնեց. — Բանասէր,
էջ 293-4:

Ը. — 1639? — 1673. — Դաւիթ Վրդ. Բա-
ղիեցի: Սա բանաստեղծ էր և անձանձիր
քարոզիչ: Աշակերտ Մեսրոպ վարդապետի,
Իր ունեցած ձեռագիր զրբերը կը թողու-
նէ Վանքին: Գրած է Համառոտ Ժամանակա-
գրութիւն մը: Վախճանած է Լիմ Անապատը
և թաղուած անդ. — Բանասէր, էջ 293-4:
Յ. Թօփնեան, Յուցակ, էջ 96: Զ. Զ. Ոսկե-
եան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ
933:

Թ. — 1673 — 1710. — Աւետիք Վարդա-
պետ, աշակերտ Դաւիթ վարդապետի, ձեռն-
տուութեամբ իր աշակերտին՝ Աբրահամ
վարդապետի, 1693ին հիմնովին կը վերա-
շինէ Խնդրապատար Ս. Աստուածածնի Եկե-
ղեցին: Աւետիք Վրդ. կը վախճանի 1710ին
և կը թաղուի տաճարի փլակողմեան դա-
սին մէջ. — Բանասէր, էջ 296: Կիւլէսէր-
եան, Կոլոտ, էջ 146: Զ. Զ. Ոսկեան,
Վասպուրականի Վանքերը, Գ., էջ 925:

Ժ. — 1710 — 1723. — Աբրահամ Վրդ.
Ալամեցի, որդի Սարգսի, կը յաջորդէ իր

ԳՐԱՆՈՍԵԱՆՆԵ

“ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ԳՐԱՌԻԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ”

Հեղինակ՝ ՊՐՈՖ. ԱՇՈՏ Գ. ԱՏԻՍԱՆԻԱՆ

Երևան, 1959

«Հայ Գրի եւ Գրչութեան Պատմութիւն»
և անոր հեղինակը գուրս կը մնան այն հո-
սանքէն՝ որուն ձգտումն է, առանց արդար
պատճառներու, հրատարակել հաստատօր
գիրքեր: Արդարեւ, Պրոֆ. Աշոտ Գ. Աբրա-
համեանի ներկայ աշխատութիւնը կոնկրե-
հատոր մըն է, ուր առանց աւելորդաբա-
նութիւններու՝ ժուժկալ ու գոհացուցիչ
կերպով արուած են Հայ Հնագրութեան

ուսուցչին, և իբրեւ վաստակաւոր պաշտոն-
եայ կը թաղուի տաճարի փլակողմեան
դասին մէջ. — Բանասէր, էջ 296-7: Ոսկե-
եան, էջ 925:

ԺԱ. — 1723 — 9. — Երեմիա Արեւիկա-
կոպոս, որդի Զիկցի Յոհանի, կը յաջորդէ
իր ուսուցչին: Իր օրով Շէրվընցիք կը թա-
ւանեն Վանքը և շատ աւերներ կը գործեն.
— Բանասէր, էջ 297:

ԺԲ. — 9 — 1749. — Աբրահամ Վարդա-
պետ, որդի Տէր Ղուկասի, իր ուսուցչին կը
յաջորդէ անոր կենդանութեան իսկ: Վախ-
ճանած է 1749ին. — Բանասէր, էջ 297:

ԺԳ. — 1749 — 1760. — Սահակ Արեւ-
պիսկոպոս, որդի Փարխընկեցի Պարթէլի և
աշակերտ Կաղնոց Սահակ վարդապետին:
Պաշտօնի կը ձեռնարկէ 1749 Գեղեցեմբեր.
25ին և կը վախճանի 1760ին. — Բանասէր,
էջ 297, 299:

ԺԴ. — 1760 — 9. — Վարդան Վարդա-
պետ, աշակերտ Երեմիա վարդապետի.
Վանքին ունեցած 7 քսակ պարտքէն 6
քսակ կը վճարէ և կը մնայ մէկ քսակ:
Կը նորոգէ Վանքը և կը ճոխացնէ ամէն
կերպով. — Բանասէր, էջ 299:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

տեղիքն ու խնդիրները: Եւ ասիական սնչուշտ գիրքին կարեւոր մէկ առաւելութիւնն է:

Հնագրութիւնը Հայ Բանասիրութեան անմշակ մէկ մարզը է: Թատկապէս 1850—1950-ի հարկւրամեակի ընթացքին, հայ հնագրութեան զանազան հարցերուն մասին հրատարակուած են բազմաթիւ յօդուածներ ու գիրքեր, որոնց կարեւորագոյններն են՝ Հ. Յակոբոս Տաշեանի «Ակնարկ մը Հայ Հնագրութեան վրայ», Գարեգին Կթղ. Յովսէփեանի «Գրչուքեան Արուեստը Հին Հայոց Մէջ» և Հրաչեայ Աճառեանի «Հայոց Գրչուք» ու «Մեսրոպ Մաեսոց» (էջմիածին): Այս մեծ հեղինակութիւններուն կը միանայ աւելի Ս. Աբրահամեանի, որ արդէն հայ հնագրութեան ձեռնարկ մը հրատարակած է երկուսը (1940 և 1949)՝ «Հայկական Պալեոգրաֆիա» վերնագրով:

«Հայ Գրի եւ Գրչուքեան Պատմութիւնը» յիշուի նոր ու ամբողջական հրատարակութիւնն է «Հայկական Պալեոգրաֆիա»ին: Միայն չհասկցայ թէ ինչո՞ւ Պրոֆեսորը իր աշխատութիւնը չէ խորագրած «Հայ Հնագրութիւն»: Հատորը կը բացուի «Ներածութեամբ» մը (էջ 5—16), ուր հեղինակը կը պարզէ Հնագրութեան առարկան և Հայ Հնագրութեան պատմութիւնը:

Առաջին գլխուն մէջ (էջ 17—32), «Հայաստանում այլ նշանագրերով և լիզուններով գրուած գրութիւնները», — Աբրահամեան կը ներկայացնէ «էջնապատկերները, Հիթիթներու և Ուրարտացիներու գրութիւնները, և արամէական, յունական և լատինական արձանագրութիւնները Հայաստանի մէջ»:

Երկրորդ գլուխն է՝ «Հնագոյն տեւեալներ նախամեսորոպեան գրի և գրականութեան մասին» (էջ 33—46), Այստեղ քըննարկուած է նախամեսորոպեան գրի ու գրականութեան հարցը, յիշատակուած են զանազան հայագէտներու կարծիքները խնդրի մասին և յառաջ բերուած են փաստեր՝ ի նպաստ այն թէզին թէ Մեսրոպ Մաշտոցէն առաջ գիր ու գրականութիւն կար Հայաստանն աշխարհի մէջ: Պրոֆ. Աբրահամեան արդարօրէն կ'ըսէ. «Ամփոփելով մեր կարծիքը նախամեսորոպեան հայ գրի և գրականութեան մասին, մենք գալիս ենք վճռական այն եզրակացութեան, որ հիթիթու-

սական Հայաստանում գոյութիւն է ունեցել հայկական մեհենական գիր և գրականութիւն, որը ոչնչացուել է ամբողջապէս քրիստոնէութեան կողմից: Գրիստոնէութիւնը Հայաստանում ճանաչուելուց յետոյ մի քանի դար շարունակ գործ են ածել յունական և ասորերէն տառանիշերը» (անդ, էջ 46):

Երրորդ գլուխը նուիրուած է հայկական գրի ստեղծման (էջ 47—65), Հոս, Մաշտոցի ծննդավայր Հացեկաց գիւղին Փաւստոս Բիւզանդի կողմէ տրուած «կարճագատ» բառը, Պրոֆեսորը կը մեկնաբանէ իբր սահմանափակ ազատութիւն ունեցող գիւղ, և ապա կ'նշարկացնէ. «Բոլոր դէպքերում . . . սկզբնաղբիւրների հիման վրայ մենք կարող ենք միայն հաստատապէս ասել, որ Մաշտոցը եղել է աշխատաւոր գիւղացու որդի» (անդ, էջ 49): Կը զարմանամ այս եզրակացութեան համար, որովհետեւ սկզբնաղբիւրները մեզի երբեք իրաւունք չեն տար «հաստատապէս ասելու» որ «Մաշտոցը եղել է աշխատաւոր գիւղացու որդի»: Ընդհակառակը, Անանիա Շիրակացի Մեսրոպի համար յստակ կերպով կ'ըսէ թէ «յազատ տանէ» (= աղնուական տուն) էր⁽¹⁾, և Փաւստոս ալ «կարճագատ» եզրը կ'ընձեռէ մեզի: Այս բառին լատգոյն մեկնաբանութիւնը տուած է Հրաչեայ Աճառեան (տես «Մեսրոպ Մաեսոց»), ըստ որում «կարճագատ = երկրորդական կարգի աղնուական» կը նշանակէ: Միւս կողմէ, Կորիւնի վկայութիւնը, թէ Մաշտոց «Հացեկաց գիւղէն էր», հաստատուն փաստ մը չի կրնար ըլլալ՝ ըսելու թէ հայ գիրերու յօրինողը աշխատաւոր գիւղացու որդի էր», քանի որ բազմաթիւ գիւղերու մէջ աղնուականներ կ'ապրէին՝ իբր հողատէրեր: Հուսկ ուրեմն յիշենք այլ նշաններ՝ Մաշտոցի աղնուական ծագման. — 1) Հայրը Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն էր և վարդան կը կոչուէր. ուրեմն և հաւանաբար Մամիկոնեան և աղնուական էր: 2) Մեսրոպ բարձր կրթութիւն ստացած էր և Արքունիքի մէջ զինուորական մեծ պաշտօն ունէր՝ իբր քարտուղար և զօրական: Իրական-

(1) «Ամանիա Շիրակացու Մաեսնագրութիւնը, հրտ. Ա. Աբրահամեան, Երևան, 1944, էջ 389:

նութիւնն է որ այդ ժամանակ հասարակ մարդոց չէր տրուեր նման դիրք ու դործ։

Արբանհաման, հայերէն գրերու գիւտին որպէս միակ զրգապատճառ կը նշէ ազգայն- լին ազդակը, թէ Միսրոպ գիր ստեղծեց պայծառելու համար յունական և ասորական միասակար ազգեցութիւններու զէմ։ Այս պատճառ մըն էր, բայց ոչ միակը։ Կորիւնի յատկ վկայութիւններուն համա- ձայն⁽²⁾, Մաշտոց մտածեց հայկական գիր հնարել՝ հայերէն լեզուով Ս. Գիրք տալու համար ժողովուրդին ձեռքը և վայն դաս- տարակելու քրիստոնէական գրականու- թեամբ⁽³⁾։

Ճիշդ է Պրոֆեսորին պնդումը որ հայ- կական քրիստոնէական գրերու գիւտին ստոյգ տարիթիւնն է 406⁽⁴⁾։ Քաթրիլաս- Պակիդաս յարակցումը կամ սրբագրու- թիւնը, որ յիշուած է յանուն Հ. Ներսէս Ակինեանի (1935 թ.), առաջին անգամ 1913 թուին կատարած է Ժողէֆ Մարկուարտ⁽⁵⁾։

Հայերէն այբուբենը ատաղձին առնու- չութեամբ, Արբանհաման կը յառաջագրէ դանիէլեան տառերու սրբացման տեսու- թիւնը։ Սա արդէն հին ու մերժուած կար- ծիք մըն է, որովհետեւ չի համապատաս- խաներ ճշմարտութեան։ Ժամանակակից և ստուգապատում մատենագիրը՝ Կորիւն կ'ըսէ թէ դանիէլեան գիրերը իբր անկասար՝ մէկգի թողուեցան և Մաշտոց դարձեալ նոյն մտահոգութեան և ջանքին մէջ ինչա- լով՝ ինք անձամբ և... հայրական չափուն ծնեալ ծնունդս նորով և սքանչելի՝ սուրբ աշտին խրով, նշանագիրս հայերէն լեզուինս՝ այսինքն, «Որպէս հայր՝ իր սուրբ աշով ծնաւ նոր և սքանչելի ծնունդներ, — հա- յերէն լեզուի նշանագիրներն»⁽⁶⁾։ Դանիէլ- եան տառերը ոչ միայն օգուտ չունեցան,

այլ և ընդհակառակը միասակար եղան՝ ու- շացնելով հայկական այբուբենը գիւտը։ Եւ արդէն, տրուած ըլլալով որ հայերէն տառերը յունականի վրայ կերպաւորուած են, դանիէլեանները չէին կրնար օգտակար հանդիսանալ, վստիքի արամեական և կամ այլ սեմական գիրեր էին։ Դանիէլեան նշա- նագիրներու սեմական ըլլալուն փաստներն են. — ա) 22 տառեր էին. բ) Հայերէն լեզ- ուի բոլոր ձայները արտայայտելու կարո- ղութիւնը չունէին. զ22ն բաւական նշանա- գիրքն՝ ողջ ածել զսրբագրոյս — զկապս — հայերէն լեզուոյն⁽⁷⁾։

Դ, Ժ, Խ, Ծ, Հ, Զ, Զ, Զ, Զ տառերու ծագման մասին Պրոֆեսորին տուած բա- ցատարիթիւնները վիճելի են։

Չորրորդ գլուխ. Հայկական գրերի տե- սակները և նրանց դործածութեան ժամա- նակը (էջ 66—109)։ Հեղինակը հայերէն գրերը կը դասաւորէ այսպէս. — Բուն մետրոպիան բոլորագիր, միջին և ուղղան- կիւն երկաթագիր, բոլորգիր, նոսրգիր և շղագիր։ Ծատ լաւ։ Էջ 69—70, Հ. Վարդան Հացունիի հետեւողութեամբ՝ յառաջ բեր- ուած է սխալ ու սարսափելի մեկնաբանու- թիւնը Կորիւնի հետեւալ խօսքին. «Եւ ան- դէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն՝ ըզ- նորագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զեր- կայնն, զառանձինն և զկրկնաւորն միւսն՝ զամայն յօրինեալ և յանկուցեալ...»⁽⁸⁾։ Ժամանակին, Հացունին բարձր տեսակէտ մը յայտնած ըլլալու մեծամտութեամբ, հնչական կամ ձայնաբանական մեկնութիւն մը տուաւ Կորիւնի «նորագոյն», «լայնա- գոյն», «կարճ», «երկայն», «առանձին» և «կրկնաւոր» բառերուն, հիմնուելով Դիո- նիսիոս Թրակացիի Քրիստականութեան վրայ⁽⁹⁾։ Եթէ հայերէն տառերու առաջըը Դանիէլ Ասորին հայթիկեց, և եթէ գի- րերու ձայնաբանական արժէքն ալ Սամոս- տացի Հռոփանոսը ճշդեց, ինչո՞վ հայերէն գրերու հնարողն է Մեսրոպ Մաշտոց...։

(2) Վարդ Մաշտոցի, Կորիւն, հրատ. Մ. Աբել- եան, Երևան, 1941, էջ 40 և 42։

(3) Հմմտ. Ոսկեդարի Գրականութիւնը, Երևանի գ. Ս. Միսրոսեան, Երևան։

(4) Հայերէն գրերու գիւտի ստոյգ տարիթիւի մասին եւ ալ համեմատ յօդուած մը հրատարակած Երևանի Պէրոյութի Շիրակի ամսագրին մէջ (1956)։ Ըստ երևոյթի, այս գրութիւնը վերպած է Պրո- ֆեսորին ուղարկութենէն։

(5) Պատմութիւն Հայերէն Նշանագրերու եւ Վարդ Ս. Մաշտոցի, Վիեննա, 1913։

(6) Վարդ Մաշտոցի, Կորիւն, նոյն անգ, էջ 48։

(7) Նոյն անգ, էջ 46։

(8) Նոյն անգ, էջ 48 և 50։

(9) Տես Ուղղագրութիւն եւ Առաջանութիւն Հայե- րէնի, Հացունի։

Յրբաւի ոչ մէկ կապ կայ Վաստցի վարժարանի և Դիոնիսիոս Թրակացիի «Բերականոնութեան» միջև, — գիրք մը՝ որ Կորինթի վարժաւորներու տարիների հոգի թարգմանուած է հայերէնի, Կորինթի նշուած բառերուն ճիշդ քաջատուութիւնները տուած են Մանուկ Արեղեան⁽¹⁰⁾ և Նրաչեայ Աճառեան⁽¹¹⁾, որոնք կ'ըսեն թէ «նուրբ», «լայն» և այլ բառերը կը վերաբերին գիրերու ձևերուն: Եւ արդարեւ Հռուփանոս համեստ գեղագիր գրիչ մըն էր, զգրիչ ոմն հելլենական զբոսըութիւն, — հաւանաբար հայերէնի ալ անձանթ, — և ոչ աւելի ինչ, որ օգնեց Մաշտոցի նորահայր հայերէն տառերը գեղեցիկ ճաշակով ու վերջնականապէս ձևաւորելու:

Գլուխ Ե.՝ «Համառոտագրութիւն» (էջ 110—128): Գլուխ Զ.՝ «Թուանշաններու գործածութիւնը» (էջ 129—138): Գլուխ Է.՝ «Փաղափարագրութիւն» (էջ 139—173): Ընդարձակ ու շահեկան գլուխ մը՝ ուր քննուած են «Իմաստոց նշանագիրներու վերաբերող հարցերը: Պրոֆեսորը երեւանի Պետական Մատենադարանին մէջ նորոգ դրած է 39 ձեռագիրներ՝ որոնք կը պարունակեն «նշանագիրներ»: Հետաքրքրական է որ ան «Իմաստոց նշանագիրները համեմատուած է եզրագրական հիերոգլիֆներու և հնդկական նշանագիրներու հետ և նկատած՝ որոշ նմանութիւններ: Այս խնդրին քննութիւնն ու համեմատութիւնները ես ալ կատարած եմ, և աւելի խոր: «Հայ Հնագրութիւն» ձեռագիր աշխատութեան մէջ, երկար ուսումնասիրութիւններու իբր արդիւնք՝ յանգած եմ հետեւեալ եզրակացութիւններուն:

1. — «Իմաստոց նշանագիրներուն մէջ վերապրած կան մեր մեհնական գրիւրը:

2. — «Իմաստոց նշանագիրները խառնուրդ են. անոնց մէջ հայ հին մեհնական գրիւրու հետ համախառնուած են նոր կապգիրեր, գաղափարագրութիւններ ու համառոտագրութիւններ:

3. — Հայ մեհնական գրիւրը տրամաբանական որոշ նմանութիւն ունին եզրագրական հիերոգլիֆներու, հնդկական և այլ

նշանագիրներու հետ, սակայն անոնցմէ չեն ընդօրինակուած և կամ ազդուած: Հայկական մեհնականութիւնը ինքնատիպ սրտեմ մըն է եղած, որ աւելի նմանութիւն ունի հիթիթականին հետ: Նոյն բաները տարբեր կերպներու մէջ՝ քնականաբար կ'ուսնեն որոշ նմանութիւններ. հայ-եզրագրական-հնդկական նշանագիրներու նմանութիւնները այդքան են միայն:

4. — Մաշտոց մեհնական գրիւրը օգտագործած է հայ քրիստոնէական այբուբենի յօրինման մէջ: Յունարէնին պակտող հայկական հնուամենիւն համար՝ ան առած է հայ մեհնական գրիւրը: Եւ ըստ ինծի, մետրոպեան այբուբենի մօտաւորապէս տասը տառերը հին մեհնական նշանագիրներ են: Արդարեւ, նոյնն է պարագան Ղապտիներու մօտ: Անոնք ալ յունարէնի վրայ ձեւած են իրենց յառաքինները, և յայտնի ուր պակտած է յունարէն գրիւր՝ դրած են եզրագրական հիերոգլիֆ:

Գլուխ Ը.՝ «Եկեղեցականութեան և առողջանութեան նշանները» (էջ 174—185): Հետաքրքրական գլուխ մը՝ Թ.՝ «Հայկական ծածկագրութիւնը» (էջ 186—242): Գլուխ Թ.՝ «Տարեթուերի, ամսաթուերի և օրերի հաշուամենը» (էջ 243—300): Գլուխ ԺԱ.՝ «Փաղափարութիւն» (էջ 301—311): Գլուխ ԺԲ.՝ «Ջարդանկարութիւնը և զարգացրութիւնը» (էջ 312—337): Գլուխ ԺԳ.՝ «Գրանիւթը և գրեկական պիտոյքները» (էջ 338—355): Գլուխ ԺԴ.՝ «Աղաւաղամենը և աղճատումներ» (էջ 356—366): Գլուխ ԺԵ.՝ «Գրչագրութիւն» (էջ 367—392): և «Ձեռագրերի գրտական նկարագրութիւնը» (էջ 393—397):

Ընդհանուր եզրակացութիւն. — Գրախօսողիս դատումով՝ Պրոֆ. Աշոտ Գ. Արարահամանի «Հայ Գրի և Գրչութեան Պատմութիւնը առհասարակ ճշգրիտ տեղեկուածութիւններով ու ճշմարիտ տեսութիւններով կառուցուած արժէքաւոր գործ մըն է: Այս աշխատութեան թէ՛ միթոսէն և թէ՛ բովանդակութենէն շատ բան ունին սորվելիք ուսանողներին ու գիտնականները միաժամանակ, մանաւանդ անոնք՝ որոնք կը զբաղին հայ մատենագրութեամբ և ձեռագիրներով:

(10) Տես Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Հատոր Ա.:

(11) Տես Մետոյ Մատցոց, «Էջմիածին» ամսագրի մէջ: